ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2020-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

2020 թվականի օգոստոսի 27-ի թիվ 1443-Լ որոշմամբ հաստատվել է Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2020-2024 թվականների ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը:

Ռազմավարության նպատակ: Ռազմավարությունը նպատակ է հետապնդում միջնաժամկետում նպաստել Հայաստանում ձեռներեցության զարգացմանը և ՓՄՁ-ների արտադրողականության բարձրացմանը:

Ռազմավարության թիրախները: Ռազմավարության համար առանձնացվել են հետևյալ հիմնական թիրախները.

- ***Արտադրողականության աճ՝*** 2021-2023 թվերի համար միջինում տարեկան 3%, իսկ 2024 թվականի համար 7.5%:
- ***ՓՄՁ-ում զբաղվածների աճ՝*** տարեկան միջինում 2.5 %:

Ռազմավարության հիմնական ուղղությունները:

ՀՀ-ում ՓՄՁ ոլորտի ուժեղացման, մրցունակության բարձրացման համար կարևորվել են հետևյալ ռազմավարական ուղղությունները՝

1) Ֆինանսական ռեսուրսների հասանելիության ավելացում,

2) ՓՄՁ սուբյեկտների կարողությունների և ձեռնարկատիրական մշակույթի զարգացում ,

3) ՓՄՁ սուբյեկտների համար շուկաների հասանելիության ապահովում,

4) ՓՄՁ զարգացման համար բարենպաստ ինստիտուցիոնալ և իրավական միջավայրի ապահովում:

ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝

1. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՎԵԼԱՑՈՒՄ

1.1 Կառավարության 2020 թվականի մարտի 26-ի 355-Լ որոշմամբ հաստատված «Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 1-ին միջոցառում» (2022 թվականի հունվարի 27-ի 106-Լ որոշմամբ «Տնտեսության արդիականացման միջոցառում»,

2023 թվականի մայիսի 8-ի 831-Լ որոշմամբ «Արտադրողականության խթանման միջոցառում»):

Միջոցառման նպատակն է տնտեսավարողների համար ապահովել մատչելի ֆինանսական միջոցներ՝ արտադրական կարողությունները արդիականացնելու և կազմակերպության արտադրողականությունը բարձրացնելու համար:

Միջոցառման շրջանակներում նպատակային ոլորտներում գործունեություն իրականացնող տնտեսավարողների կողմից նոր/չօգտագործված մեքենա-սարքավորումների ձեռքբերման և կապիտալ շինարարության իրականացման նպատակով գործընկեր ֆինանսական կառույցների կողմից տրամադրված վարկի/լիզինգի տոկոսադրույքի 6-10% սուբսիդավորման օժանդակություն:

Միջոցառման շրջանակներում

- մեկնարկից (2022 թվականի մարտ) մինչև 2023 թվականի ավարտը կնքվել է 3591 վարկային/լիզինգային պայմանագիր, որոնցից 2618-ը կնքվել է 2023 թվականի ընթացքում,
- վարկային ընդհանուր պորտֆելը կազմել է 208.0 մլրդ ՀՀ դրամ, որից 147.9 մլրդ դրամը 2023 թվականի ընթացքում,
- պորտֆելի 59%-ը ուղղվել է ՓՄՁ ֆինանսավորմանը,
- 2023 թվականին սուբսիդավորման գումարը կազմել է շուրջ 7.9 մլրդ դրամ,
- տնտեսավարողների կողմից ձեռք է բերվել 6678 մեքենա-սարքավորումներ:

ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՊՈՐՏՖԵԼԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ



Միջոցառման շրջանակներում սուբսիդավորման ենթակա գործունեության ոլորտներն են.

- B (ԲԻ) «Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում» (բացառությամբ 7-րդ հատվածի)
- C (ԲԻ) «Մշակող արդյունաբերություն»
- D(ԴԻ) «էլեկտրականության, գազի, գոլորշու եվ լավորակ օդի մատակարարում»
- F (ԷՖ) «Շինարարություն»,
- G 45.2 (ՁԻ) «Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկում և նորոգում»
- H (ԷՅՁ) «Փոխադրում և պահեստային տնտեսություն»,
- I 55 (ԱՅ) «Կացության կազմակերպում» (բացառությամբ Երևան քաղաքի վարչական սահմաններում կացության կազմակերպման գործունեություն իրականացնող տնտեսավարողների),
- J (ՁԵՅ) «Տեղեկատվություն և կապ»,
- M (ԷՄ) «Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն»,
- N77 (ԷՆ) «Վարձույթ և լիզինգ»,
- P (ՓԻ) «Կրթություն»,
- Q (ՔՅՈՒ) «Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում»,
- R (ԱՌ) «Մշակույթ,զվարճություններ եվ հանգիստ» (բացառությամբ 92-րդ հատվածի):

ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՊՈՐՏՖԵԼՆ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ



ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ՊՈՐՏՖԵԼԻ ԲԱՇԽՎԱԾՔԸ





1.2 Կառավարության 2020 թվականի մարտի 26-ի 355-Լ որոշմամբ հաստատված «Բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավման միջոցառում» (2022 թվականի օգոստոսի 4-ի 1224-Լ որոշում, 2023 թվականի մայիսի 8-ի 831-Լ որոշմամբ կատարված փոփոխություններ):

Միջոցառման նպատակն է բարձրացնել տնտեսավարողների արտադրողականությունը՝ աջակցելով ներգրավել բարձր որակավորում ունեցող մասնագետների:

Միջոցառման շահառուներ են համարվում ՀՀ տարածքում գրանցված և փաստացի գործունեություն իրականացնող առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունները, որոնք աջակցության համար դիմելու պահին նախորդող 12 ամսվա ընթացքում ներգրավել են բարձր որակավորում ունեցող մասնագետներ:

Միջոցառման շրջանակներում բարձր որակավորում ունեցող մասնագետ (ԲՈՈՒՄ) է համարվում այն մասնագետը, ով 30 ամսից առնվազն 12-ը ապրել է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս և աջակցությանը դիմելու պահին համարվում է եկամտային հարկ վճարող (բացառությամբ QS համաշխարհային համալսարանների վարկանիշի (QS World University Rankings) առաջատար 50 (հիսուն) ԲՈՒՀ-երից որևէ մեկում գիտությունների դոկտորի (Doctor of Philosophy) կամ դրան հավասարեցված գիտական այլ աստիճան ունեցող ԲՈՈՒՄ-ները:

Միջոցառման շրջանակներում օժանդակությունը՝ ԲՈՈՒՄ-ին վճարված աշխատավարձի փոխհատուցում, մասնավորապես.

- ԲՈՈՒՄ-երին վճարված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների առավելագույնը 20%-ը, սակայն ոչ ավելի, քան ամսական 1 000 000 (մեկ միլիոն) դրամ և ոչ ավելի, քան փոխհատուցման ժամանակահատվածի համար վճարված եկամտային հարկը.
- բացառություն են կազմում դոկտորական աստիճան ունեցող ԲՈՈՒՄ-երը, որոնց դեպքում կփոխհատուցվի վճարված աշխատավարձերի և դրան հավասարեցված այլ վճարումների առավելագույնը 50%-ը, սակայն ոչ ավելի, քան ամսական 1 500 000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) դրամը, իսկ վերջիններիս կողմից նաև Հայաստանի Հանրապետության ԲՈՒՀ-երում դասավանդելու դեպքում հիմնական աշխատավայրի աշխատավարձի նշյալ փոխհատուցումից բացի, կփոխհատուցվի նաև բարձրագույն ուսումնական հաստատության կողմից վճարված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների 70%-ը, սակայն ոչ ավելի, քան գումարային ամսական 2 000 000 (երկու միլիոն) դրամը:

Տնտեսավարողների կողմից ներգրավվել են 368 բարձր որակավորում ունեցող մասնագետներ:

Աջակցության բյուջեն կազմել է շուրջ 790,9 մլն. դրամ:

Աջակցություն է տրամադրվել 28 կազմակերպությունների:

1.3 Կառավարության 2022 թվականի հունվարի 27-ի 96-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքում 2022 թվականի սեպտեմբեր ամսին ռազմական գործողություններից տուժած տնտեսավարողների կոմունալ ծախսերի փոխհատուցման աջակցության ծրագիր»

Միջոցառման նպատակ էր օժանդակել 2022 թվականի սեպտեմբեր ամսին ռազմական գործողությունների հետևանքով ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքում գտնվող և գործունեություն ծավալող մասնավոր հատվածի տնտեսավարողներին:

Միջոցառման շրջանակներում շահառու էր հանդիսանում այն իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը՝

1) որը 2022 թվականի սեպտեմբերի 11-ի դրությամբ փաստացի իրականացրել է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N 874-Ն հրամանով հաստատված՝ Տնտեսական գործունեության տեսակների I (Այ) 55 «Կացության կազմակերպում» դասակարգչում ներառված գործունեությունը ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքում.

2) ում կողմից 2022 թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսները ներառող հաշվետու ժամանակաշրջանների համար հարկային մարմին ներկայացված ավելացված արժեքի հարկի կամ շրջանառության հարկի հարկային հաշվարկներում հայտարարագրված եկամուտը (հասույթը) չի գերազանցել նախորդ տարվա նույն ժամանակահատվածի եկամտի (հասույթի) 50 %-ը, իսկ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ հանդիսանալու դեպքում՝ 2022 թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում մատուցված ծառայությունների համար դուրս գրված հաշվարկային փաստաթղթերում (այդ թվում՝ ՀԴՄ կտրոններում) արտացոլված շրջանառությունը չի գերազանցել նախորդ տարվա նույն ժամանակահատվածի շրջանառության 50 %-ը.

3) ով դիմումի ներկայացման օրվան նախորդող օրվա դրությամբ չունի 100 հազ. դրամը գերազանցող՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ.

4) ով 2022 թվականի ընթացքում փաստացի իրականացրել է հյուրանոցային կամ հյուրատնային գործունեություն:

Միջոցառման շրջանակներում աջակցությունը տրամադրվել է միանվագ՝ 2022 թվականի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների էլեկտրաէներգիայի և գազի ծախսերի 100 %-ի չափով:

Աջակցություն է տրամադրվել 10 տնտեսավարողների:

Աջակցության բյուջեն կազմել է 63.206.006 ՀՀ դրամ:

2. ՓՄՁ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

«ԱՔՍԵԼԵՐԱՏՈՐ #5»

- *Ծրագրի նպատակն էր* կանանց տնտեսական ներուժի իրացումը և այն ուղղված էր կանանց ձեռներեցության խթանմանը և աշխատաշուկայում կանանց պահանջվածության

մակարդակի բարձրացմանը՝ վերջիններիս մրցակցային առավելությունների ընդգծման միջոցով:

Ծրագիրը բաղկացած է երկու մասից՝

- Pre-Accelerator, որը նախատեսված է խոստումնալից սկսնակ ձեռնարկատերերի համար: Նպատակն է աջակցել ձեռնարկատերերին ստեղծել թիմեր, նվազագույն կենսունակ արտադրանք և բացահայտել հաճախորդներին: Այն կենտրոնացած է արտադրանք-շուկա համապատասխանության շուրջ մտածելակերպ և հմտություններ ձևավորելու վրա՝ որպես ձեռներեցության բարձր աճ ապահովող հիմնական սյուներից մեկը նախատեսված է սկսնակ ձեռնարկատերերի համար, ովքեր ունեն ձեռնարկատիրական գաղափար, սակայն չունեն համապատասխան գիտելիքներ:
- Accelerator-ը նախատեսված է վաղ փուլի նորաստեղծ ընկերությունների համար և հնարավորություն է տալիս ընդլայնվել և բարձր արտադրողականությամբ ձեռնարկություններ դառնալ: Այն աջակցում էր արտադրանքի շուկայական համապատասխանության, արտադրանքի շղթայի համապատասխանության, շղթայի մոդելի համապատասխանությանը, մոդելի շուկայական համապատասխանության յուրացմանը:
- *Ծրագրի շրջանակներում կազմակերպվող դասընթացը* ուներ հետևյալ ուղղվածությունները՝ բիզնես, տեխնոլոգիական, մենթորների հետ հանդիպումներ, առաջին բուժօգնություն: Դասընթացներին իրենց լավագույնս ցուցաբերած մասնակիցներին տրվել է հնարավորություն՝ ներդրողներին ներկայացնել իրենց գաղափարների, պրոդուկտի պրոֆեսիոնալ ներկայացման, բրենդի վերանայման, թվային մարքեթինգի ծառայություններից օգտվելու:
- *Սկսնակ ձեռներեցների ծրագրի շրջանակներում* թիրախ էր սահմանվել 50 մասնակից, դիմել է 225 կին ձեռներեց, ՄԱԶԾ լրացուցիչ ֆինանսավորմամբ մասնակցել են 209-ը:

Փորձնական ծրագիրը ուրվագծվել է Հարթակ#5 թիմի կողմից և իրականացվել է ISTC հիմնադրամի (Նորարար լուծումների և տեխնոլոգիաների կենտրոն) կողմից:

- *Գործող ձեռներեցների ծրագրի շրջանակներում* թիրախ է սահմանվել 50 մասնակից, դիմել է 54-ը, ՄԱԶԾ լրացուցիչ ֆինանսավորմամբ մասնակցել են 54-ը:

Փորձնական ծրագիրը ուրվագծվել է Հարթակ#5 թիմի կողմից և իրականացվել է IRIS Business Incubator-ի կողմից:

Ծրագիրը իրականացվել է ՄԱԶԾ և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ:



3. ՓՄՁ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԲԱՐԵՆՊԱՍՏ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ՝

Պետություն մասնավոր երկխոսություն

Պետություն-մասնավոր երկխոսության շրջանակներում՝ կարևորելով ասոցիացիաների և գործարար միությունների կողմից բարձրաձայնված հարցերին պետության կողմից լուծում տալու կարևորությունը, 2011 թվականին ստեղծվել և արդեն 15 տարի գործում է ՀՀ փոխվարչապետին կից գործող ՓՄՁ զարգացման խորհրդը և ենթախորհրդը: 2023թթ. տեղի է ունեցել.

- 14 ենթախորհրդի նիստ,
- 5 խորհրդի նիստ,
- Քննարկվել են 35 և ավել հարցեր,
- Ընթացիկ ծրագրեր 20-ից ավել,
- Ընդունված նախագծեր/ բարեփոխումներ- 6:

4. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի ընթացքում քայլեր են իրականացվել միջազգային կազմակերպությունների հետ սերտ համագործակցային հարաբերությունների հաստատման և դրանց կայունության ապահովման նպատակով:

4.1 ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ և ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (OECD)

Էկոնոմիկայի նախարարության և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները.

- 2022-2023 թթ. աշխատանքներ են տարվել 2024 թվականի ՓՄՁ քաղաքականության ինդեքսի (SME Policy Index 2024) մշակմանն ուղղված հարցաթերթի լրացման ուղղությամբ:
- Էկոնոմիկայի նախարարության և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) կողմից կազմակերպվել է աշխատանքային հանդիպում, որի շրջանակներում քննարկվել է Հայաստանում ՓՄՁ-երի թվային փոխակերպման առաջխաղացումը (Advancing the digital transformation of SMEs in Armenia):
- 2023 թ-ի հունվար ամսից մեկնարկել են 2024թ.-ի ՓՄՁ քաղաքականության ինդեքսի մշակման աշխատանքները՝ Արևելյան գործընկեր երկրների փոքր բիզնեսի ակտի (SBA) չորրորդ փուլի գնահատման աշխատանքների շրջանակներում, որոնք ընթացել են 5 աշխատանքային փուլերով՝ հարցաթերթի լրացում, աշխատանքային հանդիպում, նախնական արդյունքների ներկայացում և լրացում, բիզնես ակտի նախնական աշխատանքային տարբերակի ներկայացում, արդյունքների ամփոփում: 2024թ-ի ՓՄՁ քաղաքականության ինդեքսը հիմնված է հիմնական հինգ թեմատիկ սյուների շուրջ (պատասխանատու Կառավարություն, ձեռներեցություն և մարդկային կապիտալ, ֆինանսական հասանելիություն, շուկաների հասանելիություն, արտադրողականություն և նորարարություն): Չորրորդ հրատարակության մեջ ներառված է նաև թվային տնտեսությանն, ինչպես նաև ՓՄՁ-երի թվայնացմանն աջակցող քաղաքականության վերլուծությունը:
- 2024թ.-ի ՓՄՁ քաղաքականության ինդեքսի մշակման աշխատանքների շուրջ կազմակերպվել է 3 աշխատանքային քննարկում՝ ներառելով բոլոր շահագրգիռ գերատեսչությունների, աջակից միջազգային և տեղական կազմակերպությունների

ներկայացուցիչների, փորձագետների, իսկ հունիսին ՏՀԶԿ-ի գրասենյակում՝ Փարիզում Արևելյան գործընկեր երկրների SBA շահագրգիռ կողմերի տարածաշրջանային հանդիպման շրջանակներում ներկայացվել է Արևելյան գործընկեր երկրների փոքր բիզնեսի ակտի (SBA) չորրորդ փուլի նախնական գնահատման արդյունքները, իսկ դեկտեմբերին ներկայացվել են ամփոփիչ արդյունքները, որոնք հրապարակվել են նաև OECD պաշտոնական կայքում:
https://www.oecd.org/countries/armenia/sme-policy-index-eastern-partner-countries-2024-3197420e-en.htm

4.2 2022/2023 ԳԻՏԵԼԻՔԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԾՐԱԳԻՐ (KOREAN SHARING PROGRAM (KSP)

2022/2023 Գիտելիքի փոխանակման ծրագրի (Korean Sharing Program (KSP) ծրագրի շրջանակներում ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը ՓՄՁ ոլորտի զարգացման նպատակով դեռևս 2022 թվականից սկսել է «Հավաստագրման համակարգի օգտագործումը նորարարական ՓՄՁ-ների բացահայտման և խթանման համար» ծրագիրը, որի իրականացումը կնպաստի ՀՀ տնտեսության կայուն և ներառական զարգացմանը նպաստող նորարարական և մրցունակ ՓՄՁ-ների ձևավորման և զարգացման համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը:

Ծրագրի արդյունքում կորեական կողմը երեք անգամ հյուրընկալվել է՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից, այցելություններ են կատարվել նորարարական լուծումներ առաջարկող կազմակերպություններ, արտադրական գործընթացներում նորարական համակարգեր կիրառող ՓՄՁ-եր, հանդիպել շահագրգիռ կազմակերպություններ հետ, որոնք աջակցում են ՓՄՁ-երին՝ նոր ստարտափների հիմնման գործում:

Հայկական պատվիրակությունը մայիսին մեկնել է Կորեայի Հանրապետության Սեուլ քաղաք, մասնակցել է Գիտելիքների փոխանակման ծրագրի (KSP) միջանկյալ հաշվետվությանը, աշխատաժողովին և փորձի փոխանակման ծրագրին:
Հանդիպումների ընթացքում քննարկվել են համագործակցության ուղղություններ նորարար ՓՄՁ-ների բացահայտման և խթանման սերտիֆիկացման համակարգի ներդրման, նորարարական և բարձր աճ ապահովող ՓՄՁ-երի վարկային երաշխավորությունների համակարգի ներդրման, սկսնակ գործարարների երաշխավորությունների, տեխնոլոգիաների առևտրայնացման, վենչուրային ֆոնդերի ստեղծման հարցերի շուրջ:

Գիտելիքների փոխանակման ծրագրի (KSP) շրջանակներում կորեական կողմը հայ փորձագետների հետ մշակել և ՀՀ կառավարությանն է առաջարկել նորարարական ՓՄՁ-երի նույնականացման երեք սխեմաներ 1՝ սկսնակ գործարարության փուլում գտնվող (վենչուրային կամ R&D տիպի) և 2՝ աճի փուլում գտնվող (տեխնոլոգիապես և կառավարչական նորարար) ՓՄՁ-երի հավաստագրման համակարգեր:

Ծրագիրը իրականացվել է Կորեայի Էկոնոմիկայի և ֆինանսների նախարարության (MOEF) և Կորեայի զարգացման ինստիտուտի (KDI) կողմից: Այն խորհրդատվական նախագիծ է, որը կոչվում է Գիտելիքների փոխանակման ծրագիր (KSP), որի շրջանակներում համագործակցում են գործընկեր երկրների հետ քաղաքականության հիմնական ոլորտներում՝ կիսվելով Կորեայի առանձնահատուկ զարգացման գիտելիքներով և փորձով և առաջարկում է համապարփակ քաղաքականության խորհրդատվություն՝ հարմարեցված գործընկեր երկրների կարիքներին, որոնք ներառում են խորը վերլուծություն, քաղաքականության խորհրդատվություն և կարողությունների զարգացման հնարավորություններ: